

ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆ ՄԻ ՌԷԿԱՆԱՏԻՒ

ՀԱՅ ՈՐԲԱՆՈՑԻՆ

Բարձրագի յուշին ամատեարի մէջ (էջ 321) խոստացեր էի կարեւոր ծանօթութիւններ հաղորդելու Ռէկանատի Հայ-Որբանոցի աշակերտաց մասին, երբ ստույգ տեղեկութիւններ ձեռքս հասնէին. և ահա պատշաճագոյն առիթ մը՝ շնորհեց ինձ դիրուածիւն անձամբ այցելելու վերոյիշեալ որբանոցը և կենակցելու երկու օր հայ որբերու հետ :

Գիտաւորութիւնս էր Լորետոն քաղաքի մէջ հռչակուած Սրբաբանին՝ Աստուածաճնի Տնան ուխտագնացութիւն մը կատարել, ուսկից միայն ժամ ու կէս ոտից ճանապարհաւ հաւ հեռի լինելով Ռէկանատի քաղաքն, անկարելի էր որ չփութայի գնալ տեսնել և մխիթարել մեր փոքրիկ որբերն, որոց թէ երկնաւոր և թէ երկրաւոր մօր պաշտօն կը կատարէ՝ նաև իր երկրաւոր բնակարանով այնքան իրենց մերձաւոր Ս. Կոյսն : Ուղեկից ինձ ունէի նոյն որբոց խնամարկու Ստեփաննան Հ. Դանիէլ վարդապետն, որոյ հետ որոշեցի նախ Ռէկանատի գնալ և անտի ի Լորետոն :

Սեպտ. 12ին գիշեր ժամանակ՝ ոչ այնքան խաղաղ օդով մեկնեցանք վենետիկն, Ալբրուկանի ալիքները կտրելով՝ յաշորոյ առաւօտը հասնելու յԱնկոնա. ուր պատրաստական ընթացք գտնելով շոգեկառքի՝ ժամէ մը հասանք Ռէկանատիի Նաւամատոյց կոչուած ծովափնայ քաղաքաւանն, ուսկից հարկ էր դեռ ժամ մի և աւելի ևս ճանապարհով կառքի՝ բարձրանալ գէպ ի բուն Ռէկանատի քաղաքն, որուն մանրամասն նկարագիրը արդէն ամաթթեթիւս ընթերցողաց բերեւ մը : Այսչափ միայն անցողաբար կուզեմ աւելցընել՝ որ քանի բլրէ բլուր վեր կը բարձրանայի՝ այնքան ալ բնութեան գեղոյ ազգած զմայլելի յափշտակութեան մէջ կը թաղուէի

մտօք, և չէի տարակուսիր որ այն հրաշալի Ապենտանց ցածագոյն բլրոց բարձրութեան վրայ, (որ մէկ կողմէն ծովային սքանչելի տեսարան կը ներկայացընէ աչաց և միւս կողմէն գեղածիծաղ կանաչադարձ ծառատուն մը ծիծաղերես բլրոց ու ձորոց, գետոց ու հովտաց), ոչ թէ միայն Ս. Կոյսն հաճեր էր իր բնակութիւնը փոխադրել տալ հրեշտակաց ձեռքք ի Նաղարեթէ ի Ռէկանատի, այլ նաև որ և իցէ սուրբք և սրբաբնիկ՝ եթէ վերստին աշխարհ գային՝ պիտի չվարանէին այդ բլրոց վրայ իրենց բնակութիւններն հաստատելու, բարձրէն բնարեւ լազոյն նկատելով անշուշտ այս տեղերը աշխարհիս գեղեցկագոյն համարուած տեղերուն մէջ :

Բայց շրջակայ վայրերու գեղեցկութիւնն աւելի՛ ես հետաքրքրուած էի նոցա մէջ ապտտան գտնող հայ որբերու բնակարանք և կացութիւնը տեսնելու և քննելու, փափաքելով հաւաստելու, որ նոքա երջանիկ երկրի մի մէջ թշուառ բնակիչներ չեն կազմեր, և փափաքելով զուր չելալ :

Հայ-Որբանոցը առ այժմ մասն կը կազմէ տեղւոյն ընդարձակ հակայաղէն կղերանոցին, որոյ թնիկ մը յատկացուած է Հայոց որբերուն բնակութեան, ունելով երկու դասարան, զանիւն մը՝ հանգստեան ժամերու հաւաքման տեղի, ընդարձակ և առողջատես ննջարան մը, որոյ կից եկեղեցեակ կամ մատուռն յատուկ հայ արարողութեան, սեւ դանատուն, և ապա երկայն սրահ մը, որոյ մէջ կան սենեակներ հիւրերու, հակողի բնակութեան, և հիւանդներու համար՝ եթէ զրտնուին : Մեր հասած պահուն՝ որբանոցը դատարի էր, որովհետև մանկունք շրջապատութեան էին տարուեր, համաձայն ամենօրեայ ժամակարգի՝ զոր քիչ վերջը պիտի ներկայացընեմ : Մինչդեռ ես զբաղուած էի մեծօրոյ խնամակալ վարդապետին հետ զահլըճին մէջ զրոյցատրութեամբ, և ահա սենեկին գոռը բացուելով՝ ներս դիմեցին ուրախութեամբ խուփ մի կայտառ, աշխոյժ, համակրելի, զուարթ պատանեկէկներու, 10—14 տարեկան հասակի մէջ, աւետելով իրարու թէ « վարդապետն եկեր է », ակն-

արկելով հ. Դ. Ստեփանեան վարդապետի վերադարձը, որ ամսօրեայ բացակայութեամբ գեռ աւելի կարօտալի եղած էր իւր սիրտ, սուն օրերուն, որոց ամէն մէկն իբրեւ որդեսէր հօր շուրջն առին, և սկսան զանազան հարցեր ընել և իրենց նորայրերը հազարով նորա հեռու զանուած առնին մասին, Այդ վայրկեանին կրկին եղաւ իրենց ուրա-

խութիւնը տեսնելով որ ես ալ հայազգի եմ, և եկեր եմ յատկապէս իրենց այցելութեան համար, Երկար վայրկեաններու կարօտութիւն չունեցան ինծի հետ ընտանեակալու, և խնդրելու մանաւանդ որ եթէ ոչ միշտ գէթ երկար ժամանակ այնտեղ մնայի իրենց սիրելի խնամակալութիւն հետ. ես խօսք տուի մնալու մի կամ երկու օր, բայց աւետեցի



Ռեկանատի Որբանոցին Աշակերտներն

որ արդէն Որբանոցի վարչութեանն որոշուած է ուրիշ հայազգի վարդապետ մ'ալ բերել տալու այնտեղ՝ իբրեւ օգնական իրենց վերապետին, որ պիտի հասնի ամսօրս վերջերը: Այս խօսքերուն վրայ նոցա երեսներն այն զգաժմունքը յայտնեցին՝ ինչ որ կը ցուցնէ աղայ մը՝ երբ իւր հօրէն յորդորուի

ազատ թողուլ իւր ձեռքին մէջ բռնած թուշնիկը, ցոյց տալով իրեն մեքէակայ ծառի մը վրայ թառած ուրիշ թռչնիկ մը՝ իբր ապագայ լաւագոյն օրս մը:

Առ այժմ տասուերկու մանկունք կը գըտնուին Որբանոցի մէջ. նոցա թուոյն ածուրը կախումն ունի այն նպատաներու առատութեւ,

նէն, որք բարեսիրաց սրտի և ձեռքի նուէր պիտի լինին առ այսպիսի բարեգործ հաս- տատութիւն մը ։ Շնորհիւ Ստեփանեան վարդապետի ներկայացուցած եմք աստ ըն- թեքցողաց այդ տասներկու մանկանց լու- սանկարէ հանուած զընկազիծ պատկերն, ուր ներկայացուած են բաց ի տղաքներէ և ի- րենց խնամակալու վարդապետէն, նաև ի- րենց առժամանակեայ իտալացի հակողն, և Որբանոցի հաստատութեան Պաշտպան և Նախագահ Պետրոս Պողաժիրի Արքեպիսկո- պոսն ։ Ունկանատիի մէջ քաջարուեստ լու- սանկարող չգտնուելուն պատճառաւ՝ Թերի և անճաշակ է լուսանկարն . բայց բնականին մէջ տղայք շատ կայտառ և զուարթ են ։ Տղայոց տնուններն հետեւեալներն են .

Յովհաննէս Ս. Կոստանդնուպոլսեցի
Գառնիկ Խաչատուրեան Արաբկերցի
Արմենակ Մազմանեան Արաբկերցի
Կարապետ Շամլեան Արաբկերցի
Տիգրան Զմկլածաբեան Արաբկերցի
Սարգիս Զիբրինեան Արաբկերցի
Մանուէլ Էբքէբեան Մալաթիացի
Ստեփան Սուքիասեան Մալաթիացի
Ստեփան Սյաւաքեան Մալաթիացի
Փելիպպոս Մարգարեան Մալաթիացի
Սարգիս Թամպուրանեան Մալաթիացի
Իսահակ Պաշպանեան Մալաթիացի *

Այս տղայոց մինչև իտալիա հասնելուն՝ շատ զժուարթութիւնք ընդ առնէ ելած են, այնպէս որ ամբողջ ճանապարհորդին տևած է քառասուն օր ։ Այդ ծանր զժուարթութիւնք հարթուած և պարզուած են շնորհիւ Գերբը- ջանիկ Ալաբեան Տ. Տ. Ստեփանոս Պ. Կաթողիկոսի, որ ցուցած հայրական զմոյն հետ անշուշտ իւր բարոյական և նիւթական ձեռնտուութիւնն միշտ անպակաս պիտի ընէ նա և ապագային մէջ այսպիսի բարեգործ հաստատութեան մը զարգացման համար ։

Տղայոց փափուկ սրտին տխուր անցելոյ մը վէրքերը զգուշացայ չնորոգելու երբեք,

այլ հետաքրքրուեցայ իրենց անցուցած ներ- կայ կենցաղ ։ Զննեցի դաստարանի մէջ ի ցոյց դրուած Օրակարգը, որոյ օրինակն է հե- տեւալը

- Ժամ 5 — 6. Զարթուել ի քնոյ և պատ- րաստութիւն .
- » 6—7¹/₂. Աղօթք ի մատուցման Ս. Պա- տարագին և ապա հանգիստ .
- » 7¹/₂—9. Նախաճաշ և ապա պատրաս- տութիւն դասառութեանց .
- » 9—11. Դասառութիւնք և ուսումնա- կան զբաղումն .
- » 11 — 1. Երգեցողութիւն, ապա ճաշ և հանգիստ .
- » 1 — 2. Քուէն .
- » 2 — 6. Պատրաստութիւն ուսմանց, դասառութիւն, հանգիստ .
- » 6 — 8. Շրջադպութիւն .
- » 8 — 9. Ընթերց, հանգիստ, աղօթք և ապա քուէն ։

Բաց ի հայկական պատարագի կամ ծամ- ասացութեան երգերէն, միաբերան և աշ- խուժիւ երգեցին իմ առջեւ նա եւ հետեւեալ ժողովրդական երգերը . Զարթիր որդեակ, Երագեա արշալոյս, Միմէ բնութիւն եր- շարք, Կենաց փշոտ սասարակը, Հայրիկը ծերացեր է, որոց վրայ իբրեւ յիշատակ ու- գեցին և սովորեցան երգել նա եւ Երբ աշե- կոծ ծովի վրայ և Բարձր երկնքի տակ ։

Սովորած ուսմունքներն է այս տարուան ընթացքի մէջ, Կրօնագիտութիւն, Հայերէն լեզու, Իտալերէն լեզու, Աշխարհագրութիւն, Պատմութիւն Սոքրո Գրոց, Պատմութիւն Հայոց . երկու դասարանի բաժնուած լինելով՝ փոքրագոյնք պատմութեանց տեղ կը սովորին Իրագիտութիւն ։

Տարագներն երոպական ձևով՝ քաղաքաց- ւոյ զգեստ է, զիւնին ամառ ատեն կը կրեն եղեգէ հիւսուած զլիարկ սպիտակ, իսկ ձմեռ ատեն հայկական ձևով արախլիմ թաւիչէ, վրան ոսկեթել զարդերով, ինչպէս կը տես- նուի լուսանկարէ հանուած այս զնկապատ- կերին մէջ ։

Երկու օր վերջը արախ և գո՛ւ տպաւորու- թեան ներքեւ մեկնեցայ Որբանոցէն՝ իբրեւ

* Գրութեանն տպագրութեան յանձնելու մե- ջոց կը լսեմք, որ յիշեալ արեւոյ թուայն վրայ աւելցելու են սերել վեց օրք ազնկունք եւսու .

անմասաց յիշատակ իրենց զգացմանց տա-
նելով սրտիս և մտացս մէջ այն գողարիկ ու
անմեղ շրթունքներէն իրենց ամենօրեայ ա-
զօթից մէջ հնչած այս խօսքերը. « Ողորմէ
Յիսուս մեր եղբայրներուն ու քրոջներուն,
ողորմէ մեր ազգին, ողորմէ և վարձատրու-

թիւն շնորհէ մեր բարեբարներուն » . . . Սի-
րելի ընթերցող, եթէ ունիս միջոց բարե-
բարելու այդ անմեղ որդոց ձայնը քեզի
համար ալ Աստուծոյ առջեւ միջնորդու բա-
րեխօս բռնէ :

Հ. Ար. Տիպոյեան

ԱԶԳԱՅԻՆ ՆՈՒՐԱՏՈՒՔ

ՌԵԿԱՆԱՏԻ ԷԱՅ ՈՐԲԱՆՈՑԻՆ

1. Մեծ. Մարտին Պապայեան . . .	առօրի 5 = ֆռ.	12. 50
2. » Աստուածաուոր Գ. Քաղցածեան . . .	» 3 = »	7. 50
3. Յարզ. Հ. Կիւրեղ Վարդապետ Եղոյեան . . .	» 4 = »	9. —
4. Մեծ. Կ. Յ. Բասմալեան . . .	»	10. —
5. Ազն. Օր. Վիկտորիա Աղանուր . . .	»	100. —
6. Յարզ. Հ. Անտոնիոս Վարդապետ Պետան . . .	» 5 =	12. 50
7. Մեծ. Պօղոս Էսմերեան . . .	»	10. —
8. Ա. Ա.	»	50. —
9. Պր. Տիգրան Մակարեան . . .	»	13. —

ամբողջ գումարն ֆռ. 224.50

ՔԱՆԱՏԱՅԻ ՈՍԿԵՀԱՆՔԱՅ ԳՏՆՈՒԻԼԸ

(Շար. և վերջ տես յէջ 484)

ՆԱԽԸՆԹԱՑ ԸՍԱԾՆԻՍ ՀԱՄԱՌՈՒ ՆԿԱՐԱ-
զիր մըն է այն նեղութեանց, որոց ենթա-
կեալ է Ալասքայի ոսկւոյն հետամուտ խու-
զարկուն, — նեղութիւնը, որ թէ և արևե-
լեան կողմի տէրութեան և Քանադայի ան-
ծանօթ էին, շատ տարի արևմտեան Ամերի-
կային մէջ « Էուզոն » տարրիներով առաջ
անունը շարագուշակ կը համարուէր :

Ալասքայի ոսկերէր զաշտաց ճանապարհ-
հորդութիւնը զժուարին է նոյն իսկ ազէկ
պատրաստութեամբ գնացող խաղարկուին, որ
թեթևամտութեամբ կը ճանապարհորդէ : Ոսկ-

ւոյն հետամուտը պէտք է որ հետը ամբողջ
ձմեռուան մը պաշարները տանի, զորոնք շատ
թանկագին կը գնէ ի Ճուշոյ, և ապա ամա-
նածանր տուգանքք բռնադատուած է անցնելու
Ջիլքուդ անցքին մէջէն : Պէտք է լիտաման
լնին վրայ ինքը անձամբ շինէ իւր նաւակը,
և շատ անգամ ինքն միայն անձամբ աշ-
խատելով առանց ուրիշի ձեռննորոշութեան.
և ենթադրելով թէ իւր որոշեալ տեղը հաւ-
նի, պէտք է ամենածանր գնով իր բնակու-
թեան տեղին օպահովցնէ : Եւ այս ամենը
հարկ է գլուխ տանի 4, 000 լիւր. սղերիներ
զբամագլխով մը : Չորամանք չէ եթէ Ալաս-
քայի վաճառականական բնկերութեան յիշա-
տակարանաց մէջ կը կորսանք, թէ անցեալ
հինգ տարւան միջոցին մէջ՝ հարկաւոր առ-
վամահ ականահաւք՝ ընկերութեան ծախքով
երկրէն դուրս զրկուեք են. և ես կրնամ ը-
սել, որ ասանք մաս մի են միայն այն հա-